ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք Գլխավոր փողոց 15, Հեռ.(0222) 6-84-51, nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 Դեկտեմբերի 2016 թվականի N 60-Ա

ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի, ավագանին որոշում է.

Հաստատել Նուռնուս համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 15 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին
2. Նուռնուս համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի N50-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
3. Նուռնուս համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի N51-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին

Կողմ- **(3)** Դեմ-**(0)** Ձեռնպահ-**(0)**

ՄԿՐՏՉՅԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՐԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք Գլխավոր փողոց 15, Հեռ.(0222) 6-84-51, nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 Դեկտեմբերի 2016 թվականի N 61-Ա

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված ,,Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի,, 2016 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 77 և դեկտեմբերի 6-ի թիվ 96 դրական եզրակացությունները, համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի վարչական տարածքի հողերի ժամանակավոր սխեմայում համայնքային սեփականություն հանդիսացող հողերից 24,52354 հեկտար, այդ թվում՝

1) գյուղատնտեսական նշանակության հողերից 07-051-0203-0078 կադաստրային ծածկագրով 16,0 հեկտար արոտավայր փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության՝ ընդերքօգտագործման համար տրամադրված հողեր գործառնական նշանակության (բազալտի արդյունահանման համար),

2) գյուղատնտեսական նշանակության հողերից 07-051-0203-0080 կադաստրային ծածկագրով 8,50974 հեկտար արոտ և այլ հողատեսք փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային

նշանակության՝ ընդերքօգտագործման համար տրամադրված հողեր գործառնական նշանակության (լիթոիդային պեմզայի արդյունահանման համար),

3) գյուղատնտեսական նշանակության հողերից 07-051-0019-0005 կադաստրային ծածկագրով 0,0138 հեկտար հողատեսք փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր գործառնական նշանակության:

4) Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ- **(3)** Դեմ-**(0)** Ձեռնպահ-**(0)**

ՄԿՐՏՉՅԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՐԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք Գլխավոր փողոց 15, Հեռ.(0222) 6-84-51, nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 Դեկտեմբերի 2016 թվականի N 62-Ա

ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N50-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1) կետի ավագանին որոշում է.

1.Նուռնուս համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի ,,Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին,, N50-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

N 50-Ա որոշման նախաբանում << 1-ին մասի ,,բ,, կետի >> բառերը փոխարինել << 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետի >> բառերով:

Կողմ- **(3)** Դեմ-**(0)** Ձեռնպահ-**(0)**

ՄԿՐՏՉՅԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՐԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք Գլխավոր փողոց 15, Հեռ.(0222) 6-84-51, nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 Դեկտեմբերի 2016 թվականի N 63-Ն

ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N51-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1) կետի և 3-րդ մասի, ավագանին որոշում է.

1. Նուռնուս համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի ,, Նուռնուս գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N45-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ,, N51-Ն որոշման մեջ կատարել լրացում և փոփոխություն՝

1) որոշման 1-ի կետում դեկտեմբերի 15-ից հետո լրացնել ,, Նուռնուս գյուղական համայնքի 2016 թվականի տեղական բյուջեն հաստատելու մասին,, պարբերությամբ

2) որոշման 1-ին կետում ,,5,, թիվը փոխարինել ,, 45,, թվով.

Կողմ- **(3)** Դեմ-**(0)** Ձեռնպահ-**(0)**

ՄԿՐՏՉՅԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՐԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ